Կարգապահական գործ թիվ 17023

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 173-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/102-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Սիմոն Բաբայանի, Խորհրդի անդամներ՝ Սեդրակ Ասատրյանի, Մելանյա Առուստամյանի, Հարություն Հարությունյանի, Կարապետ Աղաջանյանի, Նելլի Հարությունյանի:

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանի (արտոնագիր 119) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1.<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

06.02.2017թ. Պալատում մուտքագրվել է փաստաբան Արամայիս Մելքոնյանի (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմումն առ այն, որ փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանը 15.02.2017 թվականին դատարան ներկայացված «Հայցադիմումի լրացուցիչ հիմնավորումներ» վերտառությամբ փաստաթղթում վիրավորել և զրպարտել է իրեն, ինչպես նաև հրապարակել է փաստաբանական գաղտնիք համարվող տեղեկություններ[1]: Դիմողը նշել է, որ Արամայիս Մելքոնյանն անբարեխիղճ փաստաբան է, չի պատկերացնում փաստաբանի գործունեությունը, ոչ ջանասեր և զրպարտելու, կեղծելու, ստելու սովորություն ունեցող փաստաբան է: Ըստ դիմողի՝ Ռ. Տեր-Վարդանյանը կատարել է նաև այլ զրպարտող և վիրավորական արտահայտություններ:

Վերոգրյալի հիման վրա Դիմողը խնդրել է Պատասխանողի նկատմամբ հարուցել

---

[1] ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 18.04.2017թ. թիվ 100-Ա/ԿԳ-17023 որոշմամբ փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանի կողմից փաստաբանական գաղտնիք պարունակող տեղեկություններ հրապարակելու մասով վարույթ չի հարուցվել՝ այն պատճառաբանությամբ, որ Արամայիս Մելքոնյանը չի մանրամասնել, թե փաստաբանական գաղտնիք կազմող հատկապես ինչ տեղեկություններ է հրապարակել Ռուզաննա Տեր-Վարդանյանը, բացի այդ չի ներկայացրել որևէ ապացույց վերջինիս կողմից փաստաբանական գաղտնիք համարվող տեղեկությունների հրապարակման վերաբերյալ:

կարգապահական վարույթ և քննարկել նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 18.04.2017թ. թիվ 100-Ա/ԿԳ-17023 որոշման հիման վրա փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 5.1.2 և 5.2.1(1) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Կարգապահական գործը հանձնվել է փաստաբան Հայկ Պետրոսյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմող Արամայիս Մելքոնյանը ներկայացրել է բացատրություն՝ հայտնելով, որ պնդում է իր ներկայացրած բողոքն ամբողջությամբ, բողոքում նշված փաստարկները և հիմնավորումներն արժանահավատ են, Պատասխանողը ջանք չի խնայում վիրավորելու և զրպարտելու իրեն, և վերջինիս վարքագիծն առերևույթ հակասում է Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 կետերով նախատեսված կանոններին:

Դիմողը սույն կարգապահական գործով հրավիրված նիստին չի ներկայացել և վերոգրյալից բացի այլ դիրքորոշում չի ներկայացրել:

Դիմողը ներկայացրել է միջնորդություն՝ խնդրելով իր կողմից ներկայացված դիմումը թողնել անհետևանք: Անդրադառնալով նշված հարցին դիմողի միջնորդությունը Խորհրդի կողմից մերժվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգով սահմանված կարգապահական վարույթի կարճման հիմքերում վարույթի կարճման նման հիմք առկա չէ:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

27.03.2017թ. Պալատ մուտքագրված գրավոր բացատրության մեջ Պատասխանողն առարկել է ներկայացված դիմումի դեմ՝ նշելով, որ փաստաբան Արամայիս Մելքոնյանի դիմումն անհիմն է, իսկ իր կողմից ներկայացված «Հայցադիմումի լրացուցիչ հիմնավորումներ» վերնագրված փաստաթղթում շարադրված փաստերի մասին ինքը տեղեկացել է Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա.Պետրոսյանից, ուստի որևէ փաստաբանական գաղտնիք ինքը չի բացահայտել: Ռուզաննա Տեր-Վարդանյանը հավելել է, որ հենց Արամայիս Մելքոնյանն է մշտապես վիրավորում և զրպարտում իրեն՝ բոլոր դեպքերում չհերքելով, որ

«հայցադիմումի լրացուցիչ հիմնավորումներ» վերնագրված փաստաթուղթը դատարան է ներկայացվել իր կողմից:

Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողը ներկայացրել է բացատրություն՝ հայտնելով, որ Պալատի նախագահի՝ իր նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ որոշումն օրենքով սահմանված կարգով բողոքարկել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, իր կողմից ներկայացված հայցադիմումն ընդունվել է վարույթ, և դատական նիստ է նշանակվել 25.09.2017 թվականին, որպիսի պայմաններում խնդրել է իր նկատմամբ հարուցված կարգապահական գործի վարույթը կասեցնել՝ մինչև առաջին ատյանի դատարանի կողմից կայացվելիք դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Նշված դիրքորոշումը Պատասխանողը արտացոլել է նաև Խորհրդին ուղղված միջնորդության մեջ՝ խնդրելով կասեցնել կարգապահական գործի վարույթը, որպիսի միջնորդությունը Խորհրդի կողմից մերժվել է:

Պատասխանողը սույն կարգապահական գործով հրավիրված նիստին չի ներկայացել և վերոգրյալից բացի այլ դիրքորոշում չի ներկայացրել:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

21.06.2017թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստողը կազմել է եզրակացություն համաձայն որի սույն կարգապահական գործի շրջանակներում պարզաբանման ենթակա է այն հանգամանքը, թե արդյոք Պատասխանողը վիրավորական արտահայտություններ է հնչեցրել Դիմողի հասցեին:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 22.06.2017 թվականին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 16.11.2017 թվականին ժամը 19:30-ին, Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ թիվ 12 սենյակում:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստը.

Պատասխանողի կողմից Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների

ընդհանուր իրավասության դատարանին ներկայացված «Հայցադիմումի լրացուցիչ հիմնավորումներ» վերտառությամբ փաստաթղթի առանձին էջերում առկա են հետևյալ բովանդակությամբ ձևակերպումներ.

«Ա. Մելքոնյանի կողմից գրված կեղծ տեղեկություններն ինչ-որ մեկի դրդմամբ/չնայած ես հիմա արդեն գլխի եմ ընկել, թե ում դրդմամբ/, դիտավորյալ 29.09.2015թ-ին տեղադրված են եղել Hartak.am էլեկտրոնային թերթի կայքում, սակայն ինչպես տեսնում եք, այդ հոդվածում գրված է, որ ես ստացել եմ, իբրև թե, «մոտ 2500 ԱՄՆ դոլար», այլ ոչ թե 4000 ԱՄՆ դոլար, ինչպես ինձ կրկին զրպարտել է իր պատասխանի մեջ ***զրպարտելու և ստախոսության ահավոր և անուղղելի մոլուցքով տառապող փաստաբան Ա.Մելքոնյանը»*** *...*

«Պատասխանողն ***ահավոր սուտ խոսելով աչք է փակում ... առանց վատ զգալու ստեց՝ աչք փակելով*** *գործում գտնվող անառարկելի ապացույցների վրա» ...*

«Վերը նշված փաստով նույնպես ապացուցվում է, որ փաստաբան ***Ա.Մելքոնյանը սովորություն ունի զրպարտել և վիրավորել անձանց՝ ակնհայտ փաստերը նույնիսկ կեղծելու և ստելու միջոցով,*** *չնայած նա դատարանին ստորագրություն է տվել և պարտավորվել է սուտ տեղեկություններ չհայտնել, քանի որ հակառակ դեպքում կենթարկվի քրեական պատասխանատվության»...*

«Ես այս օրինակը ցանկանում եմ բերել, որպեսզի Դուք համոզվեք ևս մեկ անգամ, որ ***Արամայիս Մելքոնյանը չի պատկերացնում որպես փաստաբանի իր գործունեությունը առանց վիրավորանքի և զրպարտության, երևի մտածելով, թե որ մեկին հանիրավի վիրավորելը կամ զրպարտելը բարձրագույն խելքի նշան է և ոչ թե ընդհակառակը****»:*

Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Պատասխանողի բացատրություններով, Պատասխանողի կողմից Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին ներկայացված «Հայցադիմումի լրացուցիչ հիմնավորումներ» վերտառությամբ փաստաթղթով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Ռուզաննա Տեր-Վարդանյանը փաստաբան է հանդիսանում 29.12.1995թ., և 2006-2017թթ. ընկած ժամանակահատվածում, բացի սույն կարգապահական գործից, վերջինիս նկատմամբ այլ կարգապահական վարույթ չի հարուցվել:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանը թույլ է տվել Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1(1) ենթակետերի խախտում, հետևյալ պատճառաբանությամբ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական*

պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Կանոնագրքի 5.1.2 ենթակետի համաձայն՝ ***փաստաբանը պարտավոր է մյուս բոլոր փաստաբաններին ընդունել որպես մասնագիտական աշխատակիցներ և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ:***

Կանոնագրքի 5.2.1(1) ենթակետի համաձայն՝ ***փաստաբանը չպետք է թույլ տա այլ փաստաբանի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ:***

Պալատի խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի կողմից Կանոնագրքի վերոնշյալ կանոնների պահանջների խախտում թույլ տալու հանգամանքը պարզելու համար անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցադրումներին՝

- արդյո՞ք փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանն անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք է ցուցաբերել փաստաբան Արամայիս Մելքոնյանի նկատմամբ, և

- արդյո՞ք փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանը կատարել է այնպիսի գործողություններ կամ թույլ է տվել այնպիսի արտահայտություններ, որոնք կարող էին արատավորել փաստաբան Արամայիս Մելքոնյանի արժանապատվությունն ու փաստաբանի համբավը:

Նշված հարցերին պատասխանելուց առաջ Խորհուրդը հիշեցնում է, որ իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Այս առումով կարևոր է հիշել, որ փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ:

Փաստաբանի գործունեությունը, հետևաբար, իր վրա դնում է բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, այդ թվում՝ իրավաբանի մասնագիտության հանդեպ ընդհանրապես և այդ ոլորտի յուրաքանչյուր անդամի նկատմամբ մասնավորապես:

Փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորման ու ամրապնդման գործում շատ կարևոր է փաստաբանի և իր գործընկերների միջև հարաբերությունների կառուցումը:

Փաստաբանը պարտավոր է մյուս բոլոր փաստաբաններին ընդունել որպես մասնագիտական աշխատակիցներ և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ:

Այլ փաստաբանի մասնագիտության, անձնավորության, գործնական համբավի նկատմամբ հարգանքը պետք է լինի յուրաքանչյուր փաստաբանին ուղղորդող կանոն, քանի որ նրա բարոյական պարտականությունն է փաստաբանի կոչման արժանապատվության և փաստաբանության հեղինակության մասին հոգալը:

Այսպիսով, Կանոնագրքի կանոնները՝ փաստաբանների կողմից միմյանց նկատմամբ անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք դրսևորելու և փաստաբանի կողմից այլ փաստաբանի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ թույլ չտալու վերաբերյալ, փաստաբանական էթիկայի հիմնաքարն են, քանի որ չի կարող իր նկատմամբ հարգանք ակնկալել այն կառույցը, որի անդամները, մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում միմյանց նկատմամբ չեն ցուցաբերում փոխադարձ հարգանք և կոռեկտություն:

Փաստորեն, վերը նշված կանոնների չպահպանումը չի կարող գնահատվել որպես փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը նպաստող գործողություն:

Ավելին՝ Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE-ի) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ մեկնաբանությունների «դ» կետի համաձայն՝ *փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակազրկել ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը:*

Սույն դրույթը վկայում է այն մասին, որ կշեռքի մի նժարի վրա դրված է փաստաբանի արտահայտվելու ազատությունը, իսկ մյուս նժարի վրա՝ փաստաբանության, որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի, որին Սահմանադրությամբ վերապահվել է պետության կողմից երաշխավորված անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովումը, հեղինակությունը, մի կառույցի հեղինակությունը, որին անդամագրված են արդարադատության իրականացման գործընթացում հասարակության և դատարանի միջև միջնորդ հանդիսացող փաստաբանները, կառույց, որի բարձր հեղինակությունից է նաև կախված յուրաքանչյուր փաստաբանի հեղինակությունը պետական մարմինների, դատարանների և այլ անձանց հետ հարաբերվելիս:

Այս տեսանկյունից, բնականաբար, արդարացված և հավասարակշռված է փաստաբանի արտահայտվելու ազատության սահմանափակումը, որն ուղղված է մյուս բոլոր փաստաբանների և առհասարակ փաստաբանության հեղինակության բարձրացմանը: Նման սահմանափակումն անհրաժեշտ է հասարակության (այդ թվում՝ փաստաբանական համայնքի) համար:

Տվյալ պարագայում Խորհուրդը հաստատված է համարում այն փաստը, որ Պատասխանողն Ա.Մելքոնյանին բնորոշել է որպես ***«զրպարտելու և սպախոսության***

ահավոր և անուղղելի մոլուցքով տառապող փաստաբան», նշել է, թե Ա.Մելքոնյանն ***«ահավոր սուտ խոսելով աչք է փակում ... առանց վատ զգալու ստել է՝ աչք փակելով գործում գտնվող անառարկելի ապացույցների վրա», «փաստաբան Ա.Մելքոնյանը սովորություն ունի զրպարտել և վիրավորել անձանց՝ ակնհայտ փաստերը նույնիսկ կեղծելու և ստելու միջոցով», «Արամայիս Մելքոնյանը չի պատկերացնում որպես փաստաբանի իր գործունեությունը առանց վիրավորանքի և զրպարտության, երևի մտածելով, թե որ մեկին հանիրավի վիրավորելը կամ զրպարտելը բարձրագույն խելքի նշան է և ոչ թե ընդհակառակը»:***

Սույն արտահայտությունների՝ վիրավորական լինելու հանգամանքը որոշելու համար հարկավոր է պարզել հետևյալը. արդյո՞ք տվյալ արտահայտությունը բոլոր դեպքերում հանդիսանում է անձի և, մասնավորապես, փաստաբանի արժանապատվությունն ու համբավը արատավորող:

Նշվածի համատեքստում Խորհուրդը համարում է, որ Պատասխանողի կողմից կատարված արտահայտություններն օբյեկտիվորեն հանդիսանում են վիրավորական, քանի որ վերաբերում են փաստաբանի վարքին, վարվելակերպին, շփման ձևին երրորդ անձի կողմից տրված բացասական գնահատականին:

Նման արտահայտության կատարումը հրապարակայնորեն՝ դատավարական փաստաթղթի տեսքով, փաստաբանի մոտ օբյեկտիվորեն կարող էր ստեղծել հոգեբանական լարված իրավիճակ՝ վիրավորելով վերջինիս՝ որպես փաստաբանի արժանապատվությունը և համբավը: Պատասխանողի քննարկվող վարքագծի հետևանքով ողջամտորեն տուժել է ոչ միայն Արամայիս Մելքոնյանի անձնական արժանապատվությունը, այլև արատավորվել է նրա համբավը՝ որպես ՀՀ փաստաբանների պալատի անդամի և փաստաբանի:

Պատասխանողի կողմից օգտագործված արտահայտություններն անձնավորված են և ունեն հստակ հասցեատեր, և նշված արտահայտությունները, Խորհրդի գնահատմամբ, հանդիսանում են փաստաբանի պատիվը, արժանապատվությունն ու համբավը արատավորող, և ընդունելի չէ փոխադարձ հարգանքի վրա կառուցված հարաբերություններում փաստաբանի բարձր կոչումը կրող անձանց միջև:

Նման իրավիճակում Խորհուրդը հարկ է համարում նշել, որ բացի այն, որ փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանի կողմից նման արտահայտություններ կատարելն օբյեկտիվորեն հանդիսանում է փաստաբան Արամայիս Մելքոնյանի պատիվը, արժանապատվությունն ու համբավը արատավորող, միևնույն ժամանակ, նման արտահայտություններ կատարելով, փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանը փաստաբան Արամայիս Մելքոնյանին չի ընդունել որպես մասնագիտական աշխատակից և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք չի ցուցաբերել նրա հանդեպ:

Արդյունքում, Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանը, Ա.Մելքոնյանին բնորոշելով որպես *«զրպարտելու և սպախոսության ահավոր և անուղղելի մոլուցքով տառապող փաստաբան»*, Ա.Մելքոնյանի վերաբերյալ կատարելով *«ահավոր սուտ խոսելով աչք է փակում ... առանց վատ զգալու ստել է՝ աչք փակելով գործում գտնվող անառարկելի ապացույցների վրա»*, *«փաստաբան Ա.Մելքոնյանը սովորություն ունի*

զրպարտել և վիրավորել անձանց՝ ակնհայտ փաստերը նույնիսկ կեղծելու և ստելու միջոցով», «Արամայիս Մելքոնյանը չի պատկերացնում որպես փաստաբանի իր գործունեությունը առանց վիրավորանքի և զրպարտության, երևի մտածելով, թե որ մեկին հանիրավի վիրավորելը կամ զրպարտելը բարձրագույն խելքի նշան է և ոչ թե ընդհակառակը» արտահայտությունները, խախտել է Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 (1) ենթակետերի պահանջները:

Պալատի խորհուրդը գտնում է, որ Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը, և այդ սահմանափակումը պետք է դիտարկել, որպես օրենքով նախատեսված սահմանափակում: Կինցսեսն ընդդեմ Հունգարիայի գործով 27.01.2015թ. որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ ‹‹*դիմողի արտահայտվելու ազատությանը միջամտությունը հիմնված է 1998 թվականի թիվ 11 ակտի 37ա և 38 հոդվածների վրա, հետևաբար՝ նախատեսված է եղել օրենքով*››[2]:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի համաձայն՝ Պալատի խորհուրդը՝ լուծում է փաստաբանին պատասխանատվության ենթարկելու և կարգապահական տույժ նշանակելու հարցը:

Օրենքի 39.9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Պալատի խորհուրդը հաշվի առնելով Ռուզաննա Տեր-Վարդանյանի անձը, կարգապահական խախտման հետևանքները, մեղքի աստիճանը, տույժերի բացակայությունը, ինչպես նաև փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ, գտնում է, որ վերջինիս նկատմամբ պետք է կիրառել նկատողություն տույժի տեսակը և որպես լրացուցիչ տույժ՝ իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով՝ 6 ամսվա ընթացքում 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:

Վերոգրյալը հիմք ընդունելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 3-րդ մասի, 3-րդ մասի, ՀՀ Փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով, Պալատի խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

[2] Kincess v Hungary, no.66232/10, 27 January 2015, § 27.

1. Փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանին (արտոնագիր թիվ 119), ճանաչել մեղավոր Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 5.1.2 և 5.2.1(1) ենթակետերի պահանջների խախտման համար.

2. Փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանի նկատմամբ (արտոնագիր թիվ 119), կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն և որպես լրացուցիչ տույժ՝ իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով՝ 6 ամսվա ընթացքում 4 ակադեմիական ժամ ժամաքանակով.

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին Դիմողին և փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանին իրազեկելու (հանձնելու) մասին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայան

16 նոյեմբերի 2017թ.
թիվ ԿԳ/102-Ա
ք. Երևան